

ՀԱՅՈՑ ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆԸ

Բանայի բառեր – Թեոդիկ, Հրանտ Դինք, Արևմտյան Հայաստան, Թուրքիա, Կ. Պոլիս, եղեռն, արքայ, ջարդ, նահատակ, հուշարձան, հիշատակ, գրող, ազգային գործիչ, մտավորական, կրոնավոր, հերոս, վերապրող

Կան գրքեր, որոնք լույսընծայման պահից հավերժության ճամփան են բռնում: Ահա և մեկը դրանցից՝ Թեոդիկի՝ 2010 թ. Ստամբուլում վերահրատարկված «Յուշարձան ապրիլ 11-ի» գիրքը¹: Այն բաղկացած է ներածական, կենսագրական, գրական բաժիններից, համառոտ վերջաբանից և անցյալ դարասկզբին Կ. Պոլսում լույս տեսած մի քանի հայկական թերթերի ու նրանց խմբագիրների մասին հակիրճ տեղեկություններից:

Այս հրատարակությունը, իհարկե, տարբերվում է բուն բնագրից: Միյուրօքի մեր անվանի մտավորական, թարգմանիչ ու մի շարք ուշագրավ գրքերի հեղինակ Դորա Սաքայանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ լույս տեսած այս մեծարժեք հրատարակությունը, ցավոք, մայր հայրենիքում գրեթե անհայտ է: Այս գրքում հիմնականում Նարինգյուլ Թադեոսյանի կողմից առաջին անգամ թուրքերեն են թարգմանված արձակ ու չափածո այն գրական-գեղարվեստական կտորները, որոնք առկա են Թեոդիկի գրքի բնագրում, որը, անկասկած, կրկնակի նշանակություն է հաղորդում ստամբուլյան հրատարակությանը. այն պարունակում է եռալեզու՝ հայերեն, անգլերեն, թուրքերեն, ինչպես ներածական, այնպես էլ տեղեկատվական նյութեր, որոնք պատկերացում են տալիս ոչ միայն Թեոդիկի կենսագրության ու նրա գրքի ընդգրկումների մասին, այլև ներառում են մեր ժամանակների ազգային նվիրյալ Հրանտ Դինքի՝ 2007 թ. Ստամբուլի «Ակոս» թերթում տպած վերջին խմբագրականը՝ «Աղանիի նման անհանգիստ ներաշխարհս» շատ խոսուն վերնագրով, ինչպես նաև նրա կյանքին ու գործին վերաբերող մի նյութ, որը հաստատում է հայտնի ճշմարտությունը, որ «Թեոդիկեն մինչեւ Հրանդ Տինք» (այսպես է այն վերնագրված) թուրքական իշխանությունների գործելակերպը նույնն է՝ **մորթվում-սպանվում է աղավնի-խաղաղությունը:**

¹ Teodik – Թեոդիկ – Theodik, 11 Nisan Anıtı – Յուշարձան Ապրիլ 11-ի – Memorial to April 11, Istanbul, 2010. Նշենք, որ այն առաջին անգամ տպագրվել է 1919 թ. Պոլսում և վերահրատարակվել Բեյրութում՝ 1985 թ. Մեծ եղեռնի 70-ամյակի կապակցությամբ: Գրքի վերնագրի՝ «Ապրիլ 11-ի» նշումը կատարված է հին տոմարագրությամբ, որը հանգույն է մերօրյա ապրիլ 24-ի:

«Յուշարձան ապրիլ տասնըմեկի»¹ գրքի տպագրությունը նախաձեռնող հանձնախումբը «Վերջաբանի տեղ» վերտառության մեջ այն հույսն է հայտնել, թե գիրքը «առաջիկային աւելի ճոխացած և լիակատար ձևի մը տակ»² կներկայացվի ընթերցողին չկասկածելով, որ այն կարող է լրացվել ոչ միայն XX դարասկզբին Հայոց մեծ եղեռնի գոհը դարձած մարդկանց վերաբերյալ տեղեկություններով³, այլև XXI դարի առաջին տասնամյակում տեղի ունեցած մեկ այլ հայի՝ մեծ մարդասեր Հրանտ Դինքի սպանության մասին վկայությամբ⁴: Այս առումով բնութագրական է գրքի հայտնի հրատարակիչ, թուրքական իրականության մեջ գործուն քննադատ, թուրք ամենաառաջադեմ մտավորականներից մեկի՝ Ռազվի Չարաքուրուի ձևակերպումը, որը վերաբերում է մեր օրերի Թուրքիային. «Ապրիլի 24-ի դեպքերը կը քողարկուին կամ արդարացումներ մեջտեղ կը դրուին, մտաւորականներու վրայ գործադրուող ճնշումները, հաւաքական ձերբակալութիւնները եւ մահափորձերը կը դառնան սովորական երեւոյթներ: Ամէն սերունդ իր սեփական փորձով այս բոլորի վկան եղած է... Չարաղէտ պատմութիւն մը անդադար կրկնած է ինքզինքը» (էջ XXXI-XXXII):

Ասել է թե՛ «Թուրքիան միայն թուրքերին» նշանաբանը հարատև է բոլոր ժամանակների համար, ասել է թե՛ ոչինչ չի փոխվելու նաև այսուհետ, և թուրքը միշտ մնալու է ավելի ու ավելի անզիջող ու մարդասպան: Գրքի հրատարակության այս տարբերակում որպես վերն ասվածի հաստատում է հնչում Դինքի խոսքը. «Եթէ զիս դատապարտեն, օդանաւով կամ նաւով չէ, այլ ժողովրդիս պէս, անոնց գացած ճամբով պիտի հեռանամ երկրէն, ոտքո՛վ» (էջ XXXII):

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գրքի շապիկին պատկերված է կանգուն ու շէն պատի վրա մուլախոտի նման տարածված թփի սև մանրապտղի հատիկներով մի պատկեր-նկարագարդում: Այն ասես խորհրդանշում է հայ ժողովրդին պատուհասած այն սև մահն ու ավերածությունը, որ համատարած էր այդ պտուղների նման ու փաթաթված հայության մարմնին, որ անանուն էր իր կիրառման օրերին, իսկ հետո **Մեծ Զուլում** ու **Մեծ Եղեռն** անունները ստացավ: Այդպես, այդ մանրապտղի նման ջարդարար թուրքը կպել էր հայ մարմնին՝ ամեն ինչ քանդելով ու ավերելով պատ հիշեցնող աշխարհի անտարբեր հայացքի առջև: Թեև գրքի նյութը արյան մասին է, սակայն շապիկի նկարիչը կարմիր գույնով է ձևավորել միայն

¹ «Յուշարձան ապրիլ տասնըմեկի», հաւաքեց ու խմբագրեց Թեոդիկ, Կ. Պոլիս, 1919:

² Teodik – Թեոդիկ – Theodik, էջ 255:

³ Հարկ է կարևորել գրքի վերջում Դ. Մաքայանի զետեղած ապրիլյան մեր 761 գոհերի անվանացանկը, որը բացակայում է Թեոդիկի գրքի բնօրինակում: Ընդ որում, այն ներկայացված է երկու լեզվով՝ թուրքերեն և հայերեն: Տե՛ս նույն տեղում, էջ 256-269 (այս գրքից բերվող բոլոր մեջբերումների էջերը այսուհետ կնշենք տեղում):

⁴ Ուստի միանգամայն օրինաչափ է, որ գրքի սույն հրատարակությունը նվիրված է Հրանտ Դինքի հիշատակին: Առաջին էջի վրա նշված է՝ In memoriam: Hrant Dinck 1954-2007:

թուրքերեն վերնագիրը, և դրան հակառակ՝ սպիտակով են գրված հայերեն ու անգլերեն վերնագրերը¹: Բուն կարմրի իմաստը գրքում հնչում է որպես սև խարան՝ ուղղված օսմանյան հանցագործ պետությանը:

Մեծ խորհուրդ ուներ նաև Թեոդիկի հուշամատյանի 1919 թ. հրատարակության շապիկը, որի վրա հենց այդ օրերին Կ. Պոլսի Թագսիմի հրապարակի մոտ գտնվող Սուրբ Հակոբ եկեղեցուն կից հայկական գերեզմանատանը կանգնեցված «Յուշարձան Ապրիլ տասնըմեկի» կոթողի լուսապատկերն է: Այդ հուշարձանը քեմալականների՝ Կ. Պոլսի նոյեմբերյան գրավումից հետո «անհետացավ» (այդ վայրում այժմ հյուրանոց ու ռադիոտուն է կառուցված): Հուշարձանը պատվանդանի վրա բարձրացող անհամաչափ քարակոթող է, որի առաջին պլանում և հեռապատկերում բարձրաքանդակի ձևով պատկերված է աքսորի ճանապարհը բռնած մարդկանց մի խումբ՝ հալածված հորդ անձրևից ու քամիներից: Հուշարձանի պատվանդանի առաջամասում զոհերի կորուստն են ողբում ձուլածո երկու սգավոր կանայք: Հուշարձանի լուսապատկերը ասես խտացումն էր Թեոդիկի գրքի բովանդակության:

Սկիզբ առնելով 1915 թ. ապրիլ 24-ի սև գիշերից՝ Մեծ եղեռնը ձգվեց Առաջին համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում՝ հայության հոգում սփռելով մահվան մի լռություն, որը անընդհատ գոռում է ու գոռալու է միշտ էլ: Թեոդիկի գիրքը այդ պատմությունն է մեզ ներկայացնում՝ շեշտելով, թե հայության դեմ օգտագործված դաշույնը կռանվել էր շատ ավելի վաղ:

Մուդրոս նավահանգստում 1918 թ. կնքված զինադադարից անմիջապես հետո՝ 1919 թ., պոլսահայությունը ձեռնարկեց անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հարգանքի ու սգո միջոցառումների շարք, որոնցից մեկը եղավ դրանք նախաձեռնող հանձնախմբի դիմումը ժամանակի հայտնի մտավորական, գրասեր ու բնագրահավաք, Պոլսի «Բիզանդիոն», «Ծաղիկ», «Մանգումեի էֆթար» և այլ թերթերում տպագրված մի շարք հոդվածների հեղինակ, «Ամենուն տարեցոյցի» համբավավոր խմբագիր-հրատարակիչ, «Ճանչվոր դեմքեր» և «Կադանդ» գրքերի հեղինակ Թեոդիկին՝ Թեոդորոս Լապճինճյանին (1873-1928)² առաջարկելով կազմել մեր բազում նահատակների անձն ու գործը ներկայացնող գիրք-հուշամատյան: Գրքի հեղինակի ընտրությունը պատահական չէր նաև մեկ այլ տեսանկյունից: Խոսելով Թեոդիկի մարդկային որակների մասին՝ Շահան Շահնուրը նրան նվիրված իր հոդվածում³ նշում է հատկապես գրի նկատմամբ նրա ունեցած մեծագույն պատասխանատվությունը՝ շեշտելով, որ տպագրվելիք նյութը, որպես օրենք,

¹ Տեղեկացնենք, որ կազմի և գրքի համակարգչային ձևակերպումը կատարել է Մարո Մանավյանը, իսկ կազմի լուսանկարը հրատարակիչներին է տրամադրել նկարչուհի Անահիտ Աբրահամյանը:

² Թեոդիկը ծնվել էր վրանի տակ, երբ հերթական անգամ հրդեհ էր բռնկվել Կ. Պոլսում, և մահացել ազգային մեկ այլ «հրդեհում»՝ Փարիզի այն դատարկ խցում, որը վրանից գրեթե չէր տարբերվում:

³ Տե՛ս **Շահնուր Շ.**, Զոյգ մը կարմիր տետրակներ, Պէյրուժ, 1967:

մի քանի անգամ ճշտվում ու ստուգվում էր նրա կողմից և նոր միայն հրատարակվում:

«Եւ ինչպէ՞ս դիմադրել հրէշային բան մը, որ անանուն է»¹, – գրել է Շ. Շահնուրը: Ամեն հայի մտատանջող այս հարցի պատասխանը Թեոդիկը տալիս է իր 130 էջանոց գրքով՝ **ասելով՝ շարունակել նահատակների գործը, շարունակել ապրել, բայց ապրել հիշելու վ:**

Թեոդիկը ձերբակալված², ապա Տավրոսի փեշերը արքայրված հայ մտավորականներից էր, որի կյանքը ասես մարմնավորումն է արևմտահային բաժին հասած ծանր ճակատագրի: Աքսորական Թեոդիկին ուղեկցող նամակում նշված է եղել. «Մահը տեղեկացնել հեռագրաւ»³: Հայթայթված կեղծ անձնագրով ու հայրենասեր մի քանի հայ երիտասարդների գործունեության շնորհիվ նրան հաջողվել է ազատվել: 1918 թ. վերադառնալով արքայից՝ Թեոդիկը ձեռնամուխ է եղել պոլսահայ գրական ու մշակութային կյանքի վերականգնման տքնաջան աշխատանքին, ձեռնարկել 1916-1920 թթ. «Տարեցոյցի» միացյալ համարի տպագրությունը, թղթակցել «Ժամանակ», «Վերջին լուր» և այլ թերթերի: «Բարեմիտ եւ պարկեշտ» (Շ. Շահնուր) այս մարդը դժբախտ է եղել նաև ընտանիքով. հյուժախտից մահացել են որդին ու կինը՝ միշտ կարոտ օրվա հացի (նրա կինը «Ամիս մը ի Կիլիկիա» գրքի հեղինակ Արշակունիի Թեոդիկն էր (Ճեզվեճյան): 1922 թ. քեմալականների կողմից Կ. Պոլսի գրավումից հետո շատերի պես նա հեռացել է օսմանյան պետության մայրաքաղաքից: Անցնելով Հունաստան՝ ուսուցչություն արել Գորֆու կղզում ապաստանած հայ որբերի համար, տեղափոխվել Կիպրոսի Մելքոնյան վարժարան, ապա մեկնել Փարիզ, 1924-1926 թթ. Փարիզում, Վիեննայում ու Վենետիկում շարունակել իր տարեցույցների լույսընծայումը: 1928 թ.՝ հերթական լույս տեսնելիք «Տարեցոյցի» նյութերը սրբագրելիս էլ կաթվածահար մահացել է:

Թեոդիկը իր ժամանակի այն գրական մարդկանցից մեկն է, ով միշտ գտնվեց «պատնեշին վրայ», անմնացորդ նվիրում ցուցաբերեց դեպի մատենագրությունը: Նա հավաքում էր ու գնում, հայթայթում էր ու անգամ մուրում ձեռագրեր, գրքեր, գրություններ, կենսագրականներ, թերթերի, ամսագրերի համարներ ու էջեր: Նրա այս մատենամոլությունը հանգեցրել էր նրան, որ իր տան հազարավոր հատորներից բաղկացած գրադարանը բարձրացել էր մինչ ձեռուն, որը պատճառ էր դարձել նրա ընտանիքի ծայրագույն աղքատության, քանի որ ձեռքն ընկած ամբողջ նյութական միջոցները ծախսում էր այդ ամենը ձեռք բերելուն: Բայց Թեոդիկը միայն գրահավաք չէր: Նա հեղի-

¹ Նույն տեղում, էջ 28:

² 1915 թ. հրատարակած իր «Ամենուն տարեցոյցում» Գլադստոնի ճառը տպագրելու պատճառով օսմանյան իշխանությունները նրան դատապարտել են մեկ տարվա բանտարկության:

³ Տե՛ս **Շահնուր Շ.**, նշվ. աշխ., էջ 31:

նակն է մի շարք գրքերի¹, բոլորը համառորոնումների ու անխոնջ աշխատասիրության արդյունք: Ուրեմն, իրոք որ, բոլորովին էլ պատահական չէր, որ 1919 թ. հենց Թեոդիկին առաջարկվեց կազմել «Յուշարձան ապրիլ տասներմեկի» հուշամատյանը:

1908 թ. թուրքական սահմանադրության (Թեոդիկը այն անվանում է «խաբեպատիր եւ աղէտալի») պատճառած ոգևորությունը, որն ընդհատվեց 1909 թ. կիլիկյան կոտորածներով և ապա անթեղվեց 1913-1914 թթ. հայ գրի ստեղծման և հայերեն տպագրության հոբելյաններով, արևմտահայությունը 1918-1922 թթ. ոգևորության ևս մի կարճ ժամանակաշրջան ապրեց²: Պատերազմում Թուրքիան պարտվել էր արագ աճում էր քաղաքի հայ բնակչության թիվը (այն շուտով հասավ նախապատերազմականի սահմաններին), լույս էին տեսնում տասնյակ հայկական թերթեր ու ամսագրեր, տպագրվում էին գրքեր: Երբ Թեոդիկը ձեռնարկել էր իր գրքի նյութերի հավաքումը, վերապրած հայերի մի մասը հավատացած էր, թե Թուրքիայի կործանումը վերջնական է ու անդարձ. չէ՞ որ ստեղծվել էր «պատերազմի և տեղահանության հանցագործությունների հետաքննության» հանձնաժողովը, ձերբակալվել էր ջարդերի ու աքսորների կազմակերպիչների մի մասը: Քիչ չէր նաև այն մարդկանց թիվը, ովքեր կարծում էին, թե Հայաստանի վերականգնումն ու ազգի ազատությունը արդեն իրողություն է: «Հայութեան լուսապայծառ արևը... ահա՛ իր կենսառոյգ ճառագայթները կ'արձակէ», - գրում էր այդ օրերին Բյուզանդ Պոյաճյանը (էջ 223):

Ինչպես նախորդ տասնամյակներում, այդ տարիներին ևս հայությունը Արևմտյան Հայաստանի ազատագրման հույսը շարունակում էր կապել մեծ տերությունների հետ՝ կարծելով, թե Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը, Ամերիկայի Միացյալ Նահանգները... ուր որ է կբերեն այդ ազատությունը և այն էլ՝ ոչ թե մեկ, այլ «երեք-չորս հատ ազատություն»:

Աքսորից վերադարձողները հրապարակը լցրել էին տեսածի ու լսածի պատմություններով ու հուշերով: Այդ մարդկանց խոսել ու գրել էր տալիս տառապանքի աննախադեպությունը: Նկատի ունենալով զգացածն ու ապրածը թղթին հանձնելու այդ ոգևորությունը՝ Արշակ Ալպոյաճյանը իրավացիորեն գրել է. «Կեանք ու ոգևորութիւն կը տեսնվի, միայն ընտրութիւնն է, որ կը պակսի»³:

Թեոդիկի գրքի արժանիքներից են հենց այդ «ընտրության» ապահովումը, սպանդի սարսափելի դեմքի իրական պատումի ստեղծումը և, մանա-

¹ Տե՛ս օրինակ՝ **Թեոդիկ**, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, *նույնի՛* Ձուլումը եւ մեր որբերը, Կ. Պոլիս, [1921], *նույնի՛* Գողգոթա թրքահայ հոգևորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին, հ. առաջին (Ա մաս), Անթիլիաս, 1966:

² Կ. Պոլսում լույս տեսած իր «Ձուլումը եւ մեր որբերը» գրքում Թեոդիկը այն բնութագրում է «երեւութապես փրկարար»: Տե՛ս **Թեոդիկ**, Ձուլումը եւ մեր որբերը, էջ 19:

³ «Կոչնակ», 1921, էջ 214:

վանդ, սպանդ երևույթի ընդհանրական լինելու ցուցադրումը, քանի որ մյուսները պատմում էին լոկ մի դեպքի կամ սպանության մասին:

Այո՛, եղեռնը **պատմվում էր**, բայց այն հար մնալու էր **անպատում**, քանի որ սպանողը առհասարակ հնարավոր չէ բառերով պատմել: Թեոդիկը իր գրքով հիմք է դնում եղեռնապատումի ավելի զգաստ, ծավալուն ու որքան հնարավոր է ամբողջական պատմությանը: Այն, ըստ էության, **հավաստի վկայությունների մի ամբողջություն է, պատմական արժեք ներկայացնող վավերաթուղթ**: Թեոդիկը, ինչպես նշվեց, կրել էր աքսորի բոլոր տառապանքները և վերապրողներից մեկն էր: Բայց արդյո՞ք կենդանի մնալը երջանկություն էրավ նրա ու նրա նմանների համար: Իրեն ծանոթ ու կիսածանոթ, ինչպես և անծանոթ ամեն մի նահատակ հայի վերաբերող խոսքը, բառն ու տողը գրելիս արդյոք նա մշտապես չի՞ վերապրել նրանց կրած տառապանքները, ձեռքն ընկած ամեն մի նկարի հետ չի՞ զգացել նրանց մայրերի, հայրերի, երեխաների ու հարազատների կսկիծները: Չէ՞ որ հայտնի ճշմարտություն է՝ երբ տեղեկանում ես մարդկանց գործերին ու նայում նրանց նկարներին, նրանք էլ նայում են քո գործերին, նայում են քեզ՝ ասես հարցնելով քո ապրած կյանքի ու կատարած գործերի մասին: Եվ երբ Թեոդիկի գիրքը լույս ընծայվեց, կարելի է ասել, որ **ապրիլյան զոհերը ներկա էին ու վկայություն էին տալիս**: Ու թեև մորմոքող վերքը շատ թարմ էր, և աղետի ծավալները, կիրառված մեթոդները դեռևս պատված էին քողով, սակայն, իր տեսակի մեջ լինելով առաջինը, ինչպես իրավացիորեն նշում է առաջաբանի հեղինակ Տիգրան Զավենը, Թեոդիկի գիրքը հաստատում էր «Գաղափարին յաղթանակը Բիրտ Ուժին վրայ» (էջ E):

Իր գրքում Թեոդիկը չի խտացնում գույները, հեղինակային հավելումներ չի անում, քանի որ ներկայացվող փաստերը ինքնին շատ խոսուն էին, և ինքն էլ այն համոզումն ուներ, որ **միմիայն ճշմարտությունը կարող է նրանց հիշատակի հաստատուն երաշխիքը լինել**: Եվ իրոք, գիրքը լայն բացված դարպաս է՝ հայ ժողովրդի նահատակության մի մասը ճանաչելու, մահախուճապ սերնդի ապրած սարսափների մեջ խորանալու, նրանց կրած անմարդկային տառապանքների ամբողջ ահավորությունը զգալու համար:

Հեղինակը հիշատակում և արձանագրում է զոհ գնացած 761 մարդու կյանքի պատմություն: Երբ կազմվում էր այս գիրքը, շատ նահատակների անուններ դեռևս հայտնի չէին: Հեղինակը ծրագրել էր նրանց մասին գրել «Յուշարձանի» Բ. հատորում, որը մասամբ իրականացրեց 1920-1921 թթ. շարադրված «Գողգոթա Թրքահայ Հոգեւորականութեան» գրքում, ուր ընդգրկված են միայն կրոնական գործիչները: Թալասի հայության տված զոհերի մասին, օրինակ, Թեոդիկը 1919 թ. գրում է. «... առայժմ հազիւ մէկ հոգի կարելի էր տեսնել մեզ յիշատակել, ներքին գաւառներու հետ լայն յարաբերութիւններէ զուրկ ըլլալով դեռ» (էջ 135): Նպատակ ունենալով որքան հնարավոր է իր ժողովրդի մահագրության ստույգ և ծավալուն պատմությունը շարադրել՝

հեղինակը կանգնել է նաև այն բարդության առջև, որ ոչ միայն պատմագրի, այլև մարդկային կարողության սահմաններից դուրս է՝ ճշգրիտ պատկերը ներկայացնել այն լլկումների, խոշտանգումների, որոնց ենթարկվել էին իր ազգակիցները: Նյութի պատճառած հոգեբանական բարդություններից գատ՝ Թեոդիկը պետք է հաղթահարեր նաև անհրաժեշտ տվյալներ հավաքելու դժվարությունները. դիմեր ականատեսներին ու աքսորներից վերադարձածներին, կուսակցական ու կրոնական անձանց, խմբագրություններ վազեր, նամակներ, խնդրագրեր ու դիմումներ գրեր, որի համար ժամանակ ու ջանքեր էին պահանջվում, մինչդեռ ժամանակ գրեթե չկար:

Թեոդիկը իր գրքում օգտագործել է նաև զավատներից եկած նամակներ, որոնցից մեկը Մուշի առաջնորդարանի քարտուղար Նազարեթի՝ Կ. Պոլիս ուղարկած գրությունն է. «Մշոյ դաշտեն 5000 հոգի ազատած են, մինչդեռ 200 000 էին» (էջ 129): Նշենք, որ Թեոդիկի հենց այդ տքնաջան աշխատանքի շնորհիվ է, որ մենք ունենք որոշ գրողների ու գործիչների (Է. Ակնունի, Մ. Կյուրճյան, Ռ. Ջարդարյան, Ն. Տաղավարյան, Ս. Բյուրատ, Գ. Բարսեղյան և այլք) ինքնության տվյալները՝ ինքնակենսագրականներ, գրություններ, նաև ուշագրավ նկարներ: Ի դեպ, նման գիրք ստեղծելու ամենամեծ դժվարություններից էր նաև ներկայացվող դեմքերի լուսանկարների հայթայթումը՝ այդ օրերի համար ոչ դյուրին մի բան: Իրողություն էր, որ օսմանյան իշխանությունները իրականացրած խուզարկությունների ժամանակ տարել էին ամեն բան՝ գրքեր, ձեռագրեր, փաստաթղթեր, լուսանկարներ: 1908 թ. թուրքական հեղափոխությունը խայծի նման Կ. Պոլիս էր հավաքել արևմտահայության ամբողջ մտավոր սերունդը, և դա ողբերգական եղավ այն առումով, որ ոչ միայն իշխանություններից մեծ ջանքեր չպահանջվեց ձերբակալությունների ու աքսորի ծրագիրը իրագործելու համար, այլև ոչնչացրեց բազում մտավոր ու մշակութային արժեքներ:

Թեոդիկը վկայում է, որ այդ օրերի համար սովորական մի բան էր որոնվող մարդուն չգտնելու դեպքում նրա հարազատներին աքսորելը: Հաճախ ձերբակալությունների մարմաջը հասնում էր զավեշտի: Ձերբակալվում էին նույն անուն-ազգանունը ունեցող բոլորովին այլ մարդիկ: Այդպես, «Ազատամարտի» Հրաչի (Հայկ Թիրաքյան) փոխարեն աքսոր էր ուղարկվել մի այլ անձ, մանկավարժ Մկրտիչ Կարապետյանի փոխարեն՝ մի ուրիշ հայ, հեղափոխական Ռոստոմի փոխարեն նահատակության էին ենթարկել մի ուրիշ Ռոստոմ Ռոստոմյանի, իսկ գարահիսարցի Գառնիկ Պոյաճյանին ձերբակալությունից ազատել էին՝ պայմանով, որ երեսուն ոսկի (այն ժամանակվա համար չնչին մի գումար) փոխհատուցի: Եվ քանի որ չի ճարվել այդ գումարը, նրան նորից են բանտարկել. «Իր հուսկ բանքը, խոստովանահորը ուղղեալ, «Տէր Պապա, գնա՛ ըսէ, որ 30 ոսկի չունենալուս համար կը կախուիմ կոր...», – գրում է Թեոդիկը (էջ 101):

Այն, որ օսմանյան իշխանությունների համար նշանակություն չունէր, թէ

ովքեր են ձերբակալվում, ժամանակին գրել է նաև Շ. Շահնուրը իր «Զոյգ մը կարմիր տետրակներ» գրքում. «... Շաւարշը (խոսքը «Ազատամարտ» թերթի խմբագիր Շավարշ Միսաքյանի մասին է – *Ա. Ա.*) ձեռք անցնելու մոլուցքէն բռնուած, ոստիկանութիւնը բարակ սանտրէ անցուց Պոլիսը, եւ իրենց թաքստոցէն դուրս քաշեց բազմաթիւ դողահար և դալկադէմ Շաւարշներ... Շաւարշները միշտ Հայ չէին. կար յոյն Շաւարշ մը»¹:

Իշխանությունները մարդկանց ձերբակալելու համար գործադրել են ամենաստոր միջոցները, դիմել նենգ հնարքների: Թեոդիկը գրում է, որ Հրանտ Աղաճանյանին կալանավորելու համար վերջինիս հասցեով ուղարկվել է ազգային գործիչ Փաստրմաճյանի կեղծ նամակը, որի հիման վրա հասցեատերը մեղադրվել է իշխանության դեմ դավադրելու հանցանքով:

Քանի որ անհնար էր հայ ժողովրդի միջից հանել ազատության գաղափարները, հարկ համարվեց սպանել մարմինը, ժողովրդին անճիտելու համար նախ և առաջ վերացնել մտքի, խոսքի ու հավատի մարդկանց, որը նշանակում էր նաև կասեցնել հայ ժողովրդի մտավոր ու մշակութային առաջընթացը: Աքսորյալների առաջին խմբերը կազմված էին գրողներից, թերթերի ու հանդեսների խմբագիրներից, կուսակցականներից ու կրոնավորներից: Իսկ համատարած ջարդը իրեն երկար սպասել չտվեց: Մեղադրվում էին հին ու նոր մեղքերի համար. ասենք՝ մասնակցություն 1890 թ. Գում-Գափուլի կամ 1895 թ. Բաբը Ալիի խաղաղ ցույցերին: Էջմիածնի կաթողիկոսական ընտրությունների պատվիրակ լինելու համար կախսաղան բարձրացվեց վաճառական Կարապետ Ճամճյանը, իսկ կեսարացի Տետեյան եղբայրներին բանտարկել էին Թեոդիկի «Տարեցոյցին» բաժանորդագրված լինելու համար: «Յանկարծական Տեղահանութեան երեւոյթին տակ տեսակ մը Զուլում էր ատիկա. բռնի հաւատափոխութիւն, անլուր հարստահարութիւն եւ զարհուրելի սպանոյթ», – գրում է Թեոդիկը (էջ 121), տեղահանություն, որ ընդգրկել էր բնակչության բոլոր շերտերը՝ թարգմանիչներ, դերասաններ, երաժիշտներ, արհեստավորներ, ուսանողներ, դեղագործներ, պրոֆեսորներ (այդ թվում և՛ թուրքերենի): Մտվար են եղել մանավանդ ազգային ժողովի անդամների, արտասահմանյան բարձրագույն հաստատությունների, Կ. Պոլսի կրթական օջախների շրջանավարտների շարքերը: Թուրքական իշխանությունները ձերբակալեցին նաև իրենց բանակում ծառայող հայ զինվորներին ու բժիշկներին՝ այդ ամենը ուղեկցելով գույքի և ունեցվածքի բռնագրավումներով ու թալանով, որը իրականացնելու համար բանտերից ազատեցին հազարավոր մուսուլման քրեածին տարրերի, ովքեր սիրով զինվորագրվում էին որպես **չեթե** (թուրքական ոչ կանոնավոր զորքի զինվոր, որը զբաղվում էր թալանով ու սպանություններով):

Կեսարիայի և Թալասի մասին վկայաբանելիս Թեոդիկը գրում է, որ կառավարանների քանակով այդ բնակավայրերը ամենից մեծաթիվն էին. «Այդ

¹ Տե՛ս **Շահնուր Շ.**, նշվ. աշխ., էջ 30-31:

օրերուն էր, որ յիսունը չորս հոգի մարտիրոսացան» (էջ 131): Իր «Գողգոթա Թրքահայ Հոգեւորականութեան» գրքի ներածականում Թեոդիկը գրել է. «Դիտելի է, որ թուրանեան միտքը կրնայ սլացք առնուլ մինչեւ հանճար, երբ նօթճե (նյութել – *Ս. Ս.*) դաւ և ոճիր»¹:

Եվ արևմտահայության ոսկե ծաղիկը զանգվածաբար Գողգոթա քշվեց՝ նահատակվելու Բագինի վրա՝ ծեծ, տանջանք, կաղախան, մորթոտում, քարյուղով հրկիզում, հրացանազարկում՝ սովորական բաներ՝ կրկնվող ամեն օր ու ժամ: Թուրքի գազանային բնագոյր ասպարեզ էր հանել տաժանքի բազում ձևեր՝ «... ներբան տաղել, եղունգ փետել, լինտեր խորտակել, մօրէ մերկ՝ գլխիվայր կախել, մատերու պճեղին փայտէ բեւեռ մխել, լանջուկը գելուլ, աչք փորել, ոտք պայտել»²:

Իր գրքում հայության նկատմամբ կատարվածը Թեոդիկը համարում է նախօրոք ծրագրված: Գրեթե «**գիտական ճշգրտությամբ**» վարվող այդ գազանությունները կարող էին անհավանական թվալ, սակայն ըստ տասնամյակներ շարունակ թուրքերի կողմից դեպի այլազգիները և մանավանդ հայերը դրսևորած նենգ քաղաքականության՝ կռահելի էին: Ի պատասխան պատերազմը սկսելու առիթով հայկական որոշ շրջաններում ծագած ոգևորության, ինչպես վկայում է Կոստան Զարյանը, խոսել է նաև Զոհրապը. «Դուք տաճիկները չէք ճանչնար... Ես մօտեն կը դիտեմ ամեն բան... Կ'ըսեմ ձեզի, ինձ համար այլևս կասկած չկայ, որ այս անգամ անոնք վերջ պիտի տան թե՛ մեր հարցին, թե՛ մեզի: Այո՛, այս անգամ անոնք պիտի օգտագործեն պատմական եզակի պարագաները եւ անխնայ պիտի ջարդեն: Այդպիսի հրաշալի առիթ է կուգեք որ շուները չօգտուի՛ն... Մեծ պետությունները զբաղած՝ սահմանները փակ»³: Իրոք որ, Օսմանի մարդակեր ժառանգները ամեն ինչ կատարեցին գերագույն հետևողականությամբ ու սառնասրտությամբ՝ իրենց ծրագրերն ու գործունեությունը մշակելով ամենայն մանրամասներով: Դրա ապացույցներից է նաև այն, որ ձերբակալություններն ու աքսորները ամբողջ Թուրքիայի տարածքում սկսվեցին միաժամանակ ու իրականացվեցին մինչև վերջ: Որպեսզի ժողովրդին զրկեն ինքնապաշտպանությունից, կառավարությունը հայ երիտասարդությանը տարել էր պարտադիր զինվորական ծառայության, տներից հավաքել անգամ ճաշի դանակները, հայ լինելու «անքավելի մեղքով» տեղահանել ոչ միայն աշխատունակ մարդկանց, այլև կանանց ու երեխաներին: Այդ սև շրջանի մասին խոսելիս Թեոդիկը հաստատում է, որ Կ. Պոլսի Մեզրեի բանտը ամեն օր նոր մարդկանցով էր լցվում, և ամեն օր նոր խմբեր էին մեկնում դեպի Զանդրիի, Այաշի աքսորավայրերը՝ այնուհետև Դեր-Զորի անապատները տարվելու համար՝ ավազուտների մի անհայտու-

¹ **Թեոդիկ**, Գողգոթա Հայ Հոգեւորականութեան, Նիւ Յորք, 1985, էջ 2:

² Նույն տեղում, էջ 4:

³ «Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում», Երևան, 2006, էջ 265:

թյուն, որտեղ մեկնած մարդկանց գերեզմանատեղն անգամ հնարավոր չէր ճշտել (նրանցից էր և գրող Երուխանը՝ Երվանդ Սրմաքեշխանյանը): Տառապանքի այդ ճամփաներին շատերը մահացան քաղցից ու համաճարակներից, գետամույն եղան Եփրատի ջրերում, իսկ մեծ մասը զոհ դարձավ չեթեական, քրդական ու մուսուլմանական այլևայլ մարդասպան հրոսակախմբերին: Իհարկե պատահում էին և վրիպումներ: Օրինակ, ինչպես վկայում է Միքայել Շամտանճյանը՝ գրող Արամ Անտոնյանը հրաշքով վերապրողների թվում էր հայտնվել այն դիպվածով, որ ճանապարհին կոտորվել էր ոտքը, և ուղեկցող ոստիկանները նրան նետել էին հիվանդանոցներից մեկը ու ... մոռացել (էջ 227):

Թեոդիկի գիրքը թե՛ գրական, թե՛ պատմագիտական և թե՛ ազգագրական արժեք ներկայացնող հուշարձան է, թուրքական բռնակալության կողմից հայերի նկատմամբ իրականացված եղեռնի՝ ցեղասպանության անժխտելի վկայություն, ինչպես ներկայացված ու հիշատակված, այնպես էլ բոլոր հայ նահատակների սուրբ անվան հիշատակի արժանի տուրք: Գիրքը, ինչպես և նրա շապիկի վրա պատկերված հուշարձանը, եղեռնի զոհերի **հիշատակի առաջին գործնական արձագանքները** եղան հայ իրականության մեջ: Մինչև այս գրքի տպագրությունը քչերը գիտեին կատարվածի ամբողջ սարսափների, զոհերի անունների, նրանց մահվան մանրամասների, նահատակների՝ նախկինում կատարած գործերի մասին:

Առաջին զոհը, ում անդրադառնում է հեղինակը այս գրքում, փաստաբան, գրող, հրապարակախոս և ազգային գործիչ Գրիգոր Ջոհրապն է: Գրողին նվիրված խիստ համառոտ այդ էջում Թեոդիկը կենսագրական մի քանի տվյալներ է հաղորդում և նրան բնութագրում որպես թափանցող ու պայծառ իմացականություն, «կնճռոտ հանգուցները» քակող, նաև «անստերիւր (անսխալ, ճշմարիտ – Մ. Ա.) տրամաբանութեան» դրոշմը պահող, «գրակալութեան մէջ կարկառուն դէմք», նորավեպի «հոյակապ վարպետ»¹ և այլն:

Իր գրքում Թեոդիկը նույն ջերմությամբ ու ափսոսանքով է գրում հայ գրականության մյուս մեծագույն դեմքերի՝ նահատակված Վարուժանի, Միամանթոյի, Ռ. Սևակի (նա ոչ միայն բժիշկ էր, այլև զինվորական ծառայության մեջ էր թուրքական բանակում), ազգային, քաղաքական ու կուսակցական գործիչներ Հարություն Շահրիկյանի (Ատոմ), Գարեգին Չազայանի (Գ. Խաժակ), Խաչատուր Մալումյանի (Է. Ակնունի), Տիրան Քելեկյանի ու շատ-շատերի մասին՝ իր խոսքին կցելով նրանց ստեղծագործություններից, գրություններից, ինքնակենսագրականներից, նամակներից հատվածներ ու պատառիկներ, որոնք մեկ անգամ ևս հայելիացումն են դառնում ոչ միայն այդ մարդկանց գրական ու ազգային վաստակի, այլև հաստատումը և հանձնարարականը հայ ժողովրդի անցած ու անցնելիք

¹ Թեոդիկը առաջիններից մեկն էր, որ Ջոհրապին այս որակումն է տալիս, որը, ըստ էության, քիչ է տարբերվում «նորավեպի իշխան» հանրահայտ բնութագրումից:

կյանքի ճանապարհի, խոսքեր, որոնք այսօր ևս խիստ արդիական են հնչում: Վերհիշենք է. Ակնունու «Հայրենիք» գրությունից մի հատված. «Մայր–Հայրենիքից դուրս՝ Հայ ժողովուրդը ազգ չէ, այլ փշրանք, թափթփուկ, անպէտ եւ անկարելորդ: Երկիրն է նրա պատմական դերի բեմը, նրա կուլտուրական բաղձանքների հնոցը: Թափառական, շրջիկ կեանքը, տարագրութիւնը՝ սպանեց հրէական տաղանդաւոր ազգը, նա մեզ էլ կը սպանի՝ հասցնելով ազգը հայկական ջիւղութեան:

... Մեզանից աւելի հալածական ... նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողին մի մեծ ժառանգութիւն – Հայրենիք: Ի՞նչ, մի թէ մենք պետք է մեր ապագայ սերունդին Հայրենիքի փոխարէն թողնենք լոկ հայկական գաղութներ, ցիրուցան օվկէանի այս եւ այն կողմը» (էջ 15):

Սա հենց հեղափոխական տրամադրությունների բովում ազգային մտածողության մեջ ծնված հայրենասեր արևմտահայության իր երկրին ու հողին անմնացորդ նվիրման այն բարձր գաղափարի արտահայտությունն էր, որ իր հիմքում ուներ մեկ ու միակ պատգամ՝ **արևմտահայությունը իր ազատությունը գտնելու համար միայն մի վայր ունի՝ ազատագրված Արևմտյան Հայաստանը:**

Գրքում Թեոդիկը նաև ներկայացնում է գրող Գեղամ Բարսեղյանի կենսագրությունը, նկարը և փոքրիկ մի հատված նրա «Խոնարհ հերոսներ» գրությունից: Թեոդիկի բնութագրմամբ՝ այդ «խոստումնալից տաղանդը»՝ «Մեհյանի», հեղափոխական «Ազատամարտի» ու «Ազդակի» խմբագիրը, լինելով դաշնակցական կուսակցության ակտիվ գործիչներից, օսմանյան իշխանությունների կողմից հրապարակային կախաղան էր բարձրացվել Կ. Պոլսում: Հենց այս խաչելության պատկերից է ծնվել Կոստան Զարյանի լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Ասացուած կախաղան բարձրացողի համար».

Այսօր քաղաքում,
մեծ հրապարակում,
մարդիկ հրեշտակի –
կում-կում
արին են խմում¹:

Հայ մտավորականներին ու գործիչներին կախաղան բարձրացնելը թե՛ անցյալում և թե՛ նոր օրերում սովորական բան էր օսմանյան իշխանությունների համար (հիշենք դեռևս սուլթանական Թուրքիայում կաղախան բարձրացված «Անմահն Ժիրայրին»). դա շարունակվեց ինչպես ապրիլյան սև գիշերից անմիջապես հետո՝ Համբարձում Պոյաճյան (Մուրատ), Մարտիրոս Գունտակճյան և այլք, այնպես էլ ողջ պատերազմի ընթացքում: Օրինակ՝ 1915 թ. հունիսի 2-ին հրապարակային կախաղան հանեցին 20 հնչակյան-

¹ Զարյան Կ., Օրերի պսակը, Պէրոյթ, 1971, էջ 152:

ների, որոնց թվում էր Վանի ինքնապաշտպանության հերոս Փարամազը (Մատթեոս Սարգիսյան): Ճակատագրի բերումով՝ Թեոդիկը նրանցից ոմանց հետ նույն բանտում էր եղել, անձամբ ճանաչել: Ուրեմն դժվար չէ պատկերացնել, թե ինչ մորմոքներ է ապրել նրանց մասին իր ամեն մի տողը շարադրելիս:

Գրքում տպագրված մի քանի ինքնակենսագրականներ հեղինակները Թեոդիկին էին հանձնել դեռևս պատերազմը սկսվելուց առաջ, երբ վերջինս իր «Տարեցույցերի» հերթական գրքերի համար նյութեր, ձեռագրեր ու գրական նշխարներ էր հավաքում: Տեղին է ասել, որ հենց Թեոդիկի այդ ջանքերի շնորհիվ են մեզ հասել նաև Մ. Մեծարենցի և արևմտահայ մի քանի այլ գրողների որոշ գործեր ու ձեռագրեր, որոնք նա հայտնաբերել է, կարելի է ասել, անհայտության ու մոռացության փոշիների միջից:

Թեոդիկը հաճախ է սեղմ, բայց և սպառնիչ որակումներով բնութագրում այս կամ այն գործչին, մտավորականին, գրողին, ազգի նվիրյալին: Այդ դիպուկ որակումները՝ «Քաջն Վահան», «անմեռանելին Ռուբեն», այսօր էլ մնում են ուժի մեջ, մեզ խորհել տալիս: Ռուբեն Զարդարյանին նա որակում է «թունդ դաշնակցական», բայց և՛ «գրական ջղուտ, յղկուած եւ պատկերալից ոճ մը» ունեցող, Ռուբեն Սևակին՝ «արուեստին թագնութեանց» մեջ հմուտ, «երագող ու գիտուն», «Մարդկութիւնը, Հայրենիքն ու Սէրը» երգող, Միամանթոյին՝ «ցեղին մարտիրոսացումները կ'եղերերգեր, հերոսներու կեանքը կը պանծացնէր ու վրէժ կը կայծկլտար այնքան հուժկու և սխրալի ոճով մը» (էջ 19): Վանի հայտնի Իշխանին (Նիկողայոս Պողոսյան) բնութագրում է որպէս «գյուղացուց պատշամունքին առարկայ»: Խմբագիր, ուսուցիչ, ազգային երեսփոխան Սարգիս Մինասյանին համարում է «նկարէն ոճ» ունեցող, Սմբատ Բյուրատին՝ «Հմուտ՝ Գրքր.-ի (գրաբարի – *Ս.Ս.*), ֆրնս.-ի (ֆրանսերենի – *Ս.Ս.*) եւ պատմութեան» գրող, Արտաշէս Հարությունյանին՝ «տաղանդաւոր գրագետ», «գեղագետ-քննադատ», մտավորական, ում մեջ «քերթողը ցվերջ ապրեցաւ»: Անգամ այնտեղ, որտեղ թվում է, թե Թեոդիկը «երկար» է գրում, իրականում շատ հակիրճ է իր բոլոր արտահայտություններում: Արևմտահայ իրականության մեջ իր գործունեությամբ հայտնի Թորգոմի (Արտաշէս Սեմիրճյան) մասին Թեոդիկը գրել է ընդամենը վեց տող, բայց լեցուն ու հազեցած տողեր. «Պոլսոյ հին դաշնակցականներէն և իր ծննդավայրին շրջանակին եռանդուն կազմակերպիչներէն: Կը վարէ զանազան տէրօրներ մինչև 1895: Յետոյ կ'անցնի Պուլկարիա, և Պոլիս դարձին՝ կը մասնակցի Պապը Ալիի ցույցին և Պանք Օթոմանի դէպքին, փոխադրական գործով զբաղվելով: Երլտըզի «դժոխային մեքենայ»-ի պայթման իր դերակատարութենէն ալ վերջ՝ կը մեկնի արտասահման, ուր կը մնայ մինչեւ Սահմանադրութեան հռչակում, և կու գայ մայրաքաղաք, հոս մնալով մինչեւ իր տարագրումը» (էջ 75):

Իհարկե, կարելի է և չհամաձայնել գրքում տեղ գտած գրողներից և մտա-

վորականներից ոմանց տրված որոշ բնութագրումների և գնահատումների հետ: Դրանց մի մասը մեր օրերի համար, իհարկե, հնացած կարելի է համարել: Բայց հարցի ամբողջ էությունն էլ այն է, որ Թեոդիկը իր ժամանակի համար վերաբերմունքի և ընկալման ճանապարհ էր հարթում, առաջին խոսքն ասում ու առաջին արժևորումը հնչեցնում, որը շատ կարևոր էր մանավանդ կորստի մեծությունն ու ցավը գիտակցելու առումով: Կար և երկրորդ գործոնը. Թեոդիկի բնութագրումները մղելու էին ճշտելու իր կողմից տրված «գլուխգործոց» կամ «ամենա» որակումների ճշմարտացի կամ ոչ ճշմարտացի լինելը, որն արդեն նպաստելու էր այս կամ այն մարդու իրական վաստակի ու գործի ստուգապես ճշգրտմանը: Այդ նպատակին հանգեցնում է և այն, որ Թեոդիկը շատ հաճախ գրողի գլուխգործոց է համարում մի գործ, բայց իր գրքում տպագրում է մի ուրիշ գործ կամ հատված, որով նահատակ-ընթերցող կապի ստեղծումը ավելի է ընդլայնվում: Առհասարակ հարկ է նշել, որ Թեոդիկը ոչ մի տող ինքնանպատակ չի գրել իր հուշամատյանում: Ահա նա կես էջ ծավալով տպագրել է Սմբատ Բյուրատի «Նամակներ Այաշի բանտեն» գրությունը, որը մի կողմից ինքնին վկայություն է այն բանի, որ գրության հեղինակը բանտ է նստել (և այն էլ մի քանի անգամ), մյուս կողմից, որ նա միակը չի եղել («առանձին ալ չեմ, 84 հոգի ենք»), որ բանտում անգամ նա իր հույսը չի կորցրել ու միշտ հորդորել է յուրայիններին «մտահոգ չլինել», անգամ եղել է լավատես. «Մօտ ատենեն կ'ազատինք Աստուծով», որի վերջին բառը նաև մի վերջին հույս կամ, որ ավելի ճիշտ է, անհուսություն է պարունակում: Իսկ այն արտահայտությունը, թե «Եթե Թալաթ պեյ գիտնայ, թե ընտանեօք ինչ աղետի ու զրկանքի ենթարկուած են, վերջ պիտի տայ ներկայ վիճակիս՝ որ կը նսեմացնէ իր վեհանձնութիւնը» (էջ 39), ծաղրի լավագույն օրինակ է՝ ուղղված թուրք իշխանավորին:

Բերելով այս կամ այն նահատակի կենսագրական տվյալները՝ Թեոդիկը հաճախ է վեր հանում հայ մարդու ազգային նկարագրի բարձրությունը ընդգծող հատկանիշներ՝ նվիրում, ազնվություն, զոհողություն, հայրենասիրություն, մարդասիրություն: Այդպիսի օրինակներ են Ռ. Սևակի՝ կրոնափոխության և թուրք աղջկա հետ ամուսնանալու պայմանով ազատ արձակվելու մերժման հիշատակումը, Հայկ Թիրաքյանի մարդասիրական քայլը, երբ վերջինս ինքնակամ գնացել ու հանձնվել է ոստիկանություն՝ իր փոխարեն նույն անուն-ազգանունը կրող անմեղ աքսորյալին ազատելու համար: Ամեն օր ու ամեն ժամ ազգասիրության ու պատվարժանության այդպիսի օրինակներ են ցույց տվել նաև աքսորի ճանապարհը բռնած և բանտերում հայտնված հազարավոր հայեր, մարդիկ, որոնք իրենց կյանքով ու գործով բազմիցս հավաստել են, որ իսկական հերոսներ են: Օրինակ՝ Թեոդիկը ներկայացնում է Եղոյի (Գրիգոր Եղիազարյան) կյանքի մի քանի դրվագներ. «Բինկեանցի, 50 տարու: 1891-ին կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ և Պօլիս կը մասնակ-

ցի Մամբրէ վրդ.-ի տէրօրին: Կառավարութենէն կասկածուելով, կ'անցնի Կովկաս եւ մաս կ'ունենայ կրկին տէրօրական գործի մը մէջ՝ որուն հետեւանօք կը ձերբակալուի և կ'աքսորուի Սախալին: Հոն կը մնայ մինչեւ 1905, երբ Ճաբոն՝ կղզիին կէտը կը գրաւէ, զինքն ալ ազատ արձակելով: Սահմանադրութեան հռչակումին Պօլիս կու գայ եւ պահ մը առեւտրով զբաղելէ վերջ կը մեկնի Ամերիկա: Պատերազմի տարին ծննդավայրը կը դառնայ: – Սարսափի օրերուն, ծուղակը չիյնալու համար, Մուրատի հետ խմբովին կը բարձրանայ սար և մինչեւ 1916-ի վերջը քանիցս կընդհարի կանոնաւոր բանակին: Յետոյ կ'իջնէ Մամսոն, ուր ընկերով բռնի վերցնելով առագաստանաւ մը՝ բաց ծովը կ'ելլնէ, Ռուսիա անցնելու համար: Եզերապահ մը յատուկ հրահանգով Թիգէէն կը մեկնի՝ նաւը բռնելու: Քանի մը ժամ վերջ եզերապահը կը վնասուի եւ պարտուած ետ կը դառնայ, բայց ինքն ալ գնդակահար կ'իյնայ» (էջ 143-144):

Թեոդիկի խոսքում հաճախ նկատելի են ոճական-լեզվական ուշագրավ դրսևորումներ, որոնք ոչ միայն ծառայում են ներկայացվող անձի անհատական բնութագրումներին, այլև հեղինակային խոսքին և ամբողջ պատումին հաղորդում են յուրահատուկ երանգավորում: Գրիգոր Թորոսյանի մասին, օրինակ, նա գրում է. «**ազատօրէն** ծեծեց միշտ ազգայնական խնդիրներ», կամ, ասենք, Ղազար Ղազարյանի (Մարգպետ) վերաբերյալ՝ «Երկու անհատ – «մտաւորական»-ն ու «հայդուկ»-ը – կապրէին իր մէջ»: Իսկ գրող Թլկատինցուն (Հովհաննէս Հարությունյան) բնութագրում է որպէս «բազմաթիւ սաներ» հասցնող (նրա սաներից մեկը Ռ. Զարդարյանն էր), ով գրականությունը «շէնցուցած է համով հոտով արձակներով» և «Ամենացցուն դէմքը գաւառիկ գրականութիւնը մշակողներու շարքին մէջ»:

Որքան էլ Թեոդիկը հակված լինէր դէպի հայ գիրն ու գրականությունը և իր գրքում նախ և առաջ անդրադառնար նահատակ հայ գրողների կյանքին ու գործին, ու որքան էլ ինքն իր խառնվածքով լինէր, այսպէս ասած, գրական աշխարհի մարդ, չէր կարող գրքում արժանավորապէս չհիշատակել հասարակական այլևայլ ոլորտներում աչքի ընկած և չքացումի զոհ դարձած մարդկանց՝ երեսփոխանների, թերթերի աշխատակիցների, պատրիարքարանի, կրթության ոլորտի ու ազգային կառույցների ներկայացուցիչների, ինչը ոչ ավելորդ անգամ հաստատում է այն իրողությունը, որ թուրքական սպանողը իր ծավալուն ընդգրկումներով ու համատարածությամբ բառիս բուն իմաստով համազգային եղեռն էր:

Այս առումով գիրքը բազում փաստեր ու ապացույցներ է պարունակում, արձանագրում հարյուրավոր մարդկանց տառապանքների ու մահվան պատմությունը, իմաստավորելով նրանց մահը՝ միևնույն ժամանակ ցույց տալիս նրանց անմեղությունը: Այդպէս նա սրտի մորմոքով է գրում նաև Եոզղատի նահատակների մասին. «Ի՞նչ գրել անգոր զոհերուն մասին. ո՞ր մտաւորականը, փաստաբանը, կամ ազգային ու կրթական գործիչները

կենսագրել, երբ տեղոյն բիրտ ավելի բնակչութենէն քանի մը իլեակ հազի կրնանք վերապրած տեսնել: Եօզղատի առաջնորդ հէք ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, որ կեանքիդ բոլոր շրջաններուն մէջ չարչարանքը միայն ճանչցար, Համիտի օրերէն մինչեւ կեղծ Սահմանադրութեան հոչակումը՝ կալանակալ եւ արգելափակ, աչքերէդ ու գրիչէդ թափելով միշտ «Կաթիլ մը արցունք այրած սրտերու»: Ընդհ. Պատերազմի սկզբնաւորութեան, երբ կարգակիցներդ մայրաքաղաքէս չէին ուզեր գաւառ մեկնիլ՝ ... դուն- Օտապաշեանի պէս «զինուոր Հայոց Աստուծոյ»- վազեցիր հասար հօտիդ քով, անոր հետ տառապելու եւ անոր հետ վկայուելու խժափար» (էջ 215):

Հայոց պետականության անկումից ի վեր կրոնավորները եղան մեր ազգային շահերի պաշտպաններն ու ժողովրդին առաջնորդողները: Ուստի բնական է, որ ջարդերի ու արքայների տարիների թուրքական բռնապետությունը իր ողջ ուժերը ուղղեց մանավանդ այդ դասի դեմ. քանդվեցին ու ավերվեցին մատուռներ, հողին հավասարվեցին եկեղեցիներ, հազարավոր եկեղեցականներ՝ գերապայծառից մինչև սարկավազ ու վարդապետ, քշվեցին անապատները, ուր դարձան իրենց սուրբ կրոնի անարգման ականատեսը և «մինչև ցեղումն արեան» բաժանեցին իրենց հոտին բաժին հասած տառապանքները: Իր գրքում Թեոդիկը ակնածանքով է խոսում շատ կրոնավորների մասին, տալիս եկեղեցականների անուններ, ովքեր ընկան իրենց «պարտականութեան ճամբուն վրայ», որոնցից էր Սահակ Տ. Վ. Օդաբաշյանը, ով գործել էր Սվազում, Ամասիայում, Մարզվանում, Սամսոնում, Բրուսայում, 1914 թ. պատրիարքական հանձնարարականով մեկնել գավառ ու դարձել «Պօլսոյ և գաւառի բոլոր աշխարհականներուն ու եկեղեցականներուն մէջէն առաջին **գոհը**» (էջ 167): Որքան էլ ցավով ու կսկիծով է խոսում հեղինակը ներկայացվող գոհերի մասին, այնուամենայնիվ ողջ շարադրանքի ընթացքում գերակշռում է մի բան. նա իր խոսքը չի ծանրաբեռնում սպանդի սարսափներով՝ դրանով իսկ ցանկանալով ասել, որ նրանք ու նրանց հիշատակը անմահ են, և իրենց մահով՝ կյանքն է, որ հաստատել են: Եվրոպական ու կրոնական հագուստներով այդ մարդիկ՝ ամեն մեկը իրական մի նահատակ ու հերոս, գրքի բոլոր էջերից, տարիների հեռավորությունից ասես քննական իրենց հայացքն են ուղղել բոլոր դարերի հայ սերունդներին՝ հարցնելու համար՝ շարունակվո՞ւմ է իրենց գործը, և արդյո՞ք իրենց մահը իզուր մի վատնում չի եղել: Նրանք՝ խառնվածքով ու զբաղմունքներով տարբեր այդ մարդիկ, որոնց միավորել էր եղեռնի կրակներից ելած հայոց ճակատագիրը, որոնց համար ոչ միայն գրականությունը կամ սքեմը փշե պսակ եղավ, այլև կուսակցական, ուսուցիչ, հողագործ, սերմնացան լինելը... Հարյուրավորներ, հազարավորներ: Օրինակնէր. գրքում ներկայացված հարյուրավոր մարդկանց կենսագրություններից... ցանկացածը:

Թեոդիկի այս գրքում խոսվում է նաև մինչև ապրիլի 11-ը ձերբակալված ու խոշտանգված մարդկանց մասին այն հասկանալի հիմնավորմամբ, որ

նրանց մահը եթե մի կողմից նախադրու՞ն էր ընդհանուր սպանդի, ապա մյուս կողմից՝ նրանք ևս հանուն «Սուրբ գործի» ու իրենց ժողովրդի ազատության կյանքը գոհասեղանին դրած մարդիկ էին, դրանով իսկ՝ նահատակներ: Այդ մարդկանցից Թեոդիկը առանձնացրել է Վանի կուսակալ Ջևդեթ բեյի սաղրանքով քնած պահին խողխողված (ծանոթ պատկեր նաև մեր ժամանակների համար) Իշխանին (Նիկողայոս Պողոսյան), Վանի մեպուս Վռամյանին (Օննիկ Դերձակյան), որը դարձյալ սպանվել էր նույն կուսակալի սաղրանքներով, և ում մահվան վերաբերյալ Թեոդիկը գրում է. «Առաջին արհուն էր այս, որ կը թափուէր Վասպուրականի մէջ, որմէ յետոյ Հայաշխարհի հողը ճակատագրուած էր ծայրէ ի ծայր ներկուելու կարմիրով, ... տո՛ւմ, բեմադրուած՝ Իրթիհատի ջոլիրին կողմէ գերման **ռէժիսէտուութեամբ**, որ «Ճերմակ Կոտորուած»-ի գիւտն ալ երկնեց» (էջ 107):

Թեոդիկի գրքում կան բնութագրումներ, որոնք առաջին հայացքից կարող են թվալ հպանցիկ և կամ պատահական, սակայն իրականում դրանք հայ տպագիր կամ գրավոր խոսքում այն առաջին ձևակերպումներն էին: Եթե միայն «կարմիր» կամ «ճերմակ» կոտորած ձևակերպումները նկատի ունենանք, ապա մեր օրերի դիտանկյունից դրանք կարող ենք որակել **պատմագիտական**, քանի որ, իրոք, նաև գերմանական ուղեղներում էին ծնվել զանգվածային տարագրման գաղափարները, մահվան ու աշխատանքի ճամբարների ստեղծումը, համատարած կոտորածները, որոնք հետագայում հիտլերյան Գերմանիայում նույն վայրագությամբ կիրառվեցին: Նրանց այդ գաղափարախոսությունը որոշակիորեն ձևակերպվեց նաև «Մայն կամպֆում», ուր, այլևայլ հանձնարարականներից գատ, առաջադրվում էր մոռացման ու լռության քաղաքականությունը, և ողբերգություն ապրող մարդուն արգելվում այլոց տեղեկացնել իր տառապանքի մասին կամ խոսել այն քաղաքականության մասին, որն այսօր ջանադրորեն իրականացնում է Թուրքիան:

Թուրքական ու գերմանական սրտակցությունը իհարկե ավելի հին իրողություն է, և այն, որ թուրքերը Արևելքի գերմանացիներն էին, իր հուշերում հաստատել է նաև արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ը. «... մենք բնաւորութեամբ շատ ընդհանուր գծեր ունենք... մենք իրար լաւ հասկանում ենք... գերմանական հին կայսրերը ցանկանում էին տարածել իրենց տիրապետութիւնը մինչեւ Ալպերի այն կողմը եւ երագում էին հռոմէական մեծ կայսրութեան մասին: Իմ նախնիները եւս ցանկանում էին հիմնել մի կայսրութիւն, որ տարածուէր ամբողջ աշխարհի վրայ»¹:

Մեծ տերությունների՝ տարիներ շարունակվող այդ նենգ ու երկդիմի քաղաքականությունը հենց նկատի ուներ Երվանդ Օտյանը, երբ Կ. Պոլսի «Երգիծական տարեցոյցում» գրում էր, որ շարունակվում են հյուսիսից, հարավից, արևելքից ու արևմուտքից ի նպաստ հայ ժողովրդի եկող համակրական ցույցերը, ապա սրամտորեն ավելացնում. «Համակրական ցոյցերու

¹ Պետրոսյան Ս., Թուրքերը թուրքերի մասին, Երևան, 2011, էջ 183:

մէջ մագ մնաց պիտի խեղդուէինք... բայց փոխանակ խեղդուելու համակրական ցոյցերէ, մելիճներէ կը սկսինք ջարդուել ոչ համակրական կերպով»¹:

Թեոդիկի գիրքը, որը հիմք դրեց եղեռնի ճշգրիտ ու ընդգրկուն պատմությանը, գիտական արժէք ծառայելուց գատ, իրավաբանական վկայություն է առհասարակ մարդկային պատմության, որից ոչ միայն կարելի է հազարավոր անմեղ մարդկանց խոշտանգման ապացույցներ քաղել, այլև հավաստի վկայություններ այդ ժամանակաշրջանի իրական ջարդարարների, ինչպես 1896 թ. կոտորածների հեղինակ Նեմլի Չադէ Հաճի Օսմանի, 1916 թ. հուլիսյան կոտորածների կազմակերպիչ Չաքի փաշայի, Թալէաթի «աջ բազուկ» Կ. Պոլսի Կեդրոնական բանտի տնօրէն Իբրահիմ Խայթիի, Եոզղատի ջարդարար «գասապ» Քեմալի, Կ. Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյի և շատ այլոց մասին²:

Հայկական ջարդերի իրականացման գործում մեծ դեր խաղացին հատկապես քրդական աշիրեթները, չէչենական ու լեզգիական խմբերը: Մակայն էթե նրանք սպանում էին թալանի ու առևանգման համար, դառնում լոկ գործիք, թուրքերը առաջնորդվում էին քաղաքական, ազգային ու պետական նպատակներով:

Թէև իր գրքի շատ էջերում Թեոդիկը շեշտում է այդ ջարդարարների ազգային պատկանելությունը, սակայն ոչ մի տեղ սպանող չի պատճառաբանվում կրոնական հակադրման հանգամանքով: Այլ բան է, որ թուրք իշխանությունները բորբոքել էին նաև մուսուլմանների կրոնական բնագոյները, որը շատ հարիր էր իրենց ծրագրերին:

Այս գրքի մասին ամփոփիչ խոսք ասելուց առաջ հարկ ենք համարում անդրադառնալ Թեոդիկի վաստակի մեկ այլ արտահայտության ևս, որը դրսևորվեց նրա վերջին՝ «Գողգոթա Թրքահայ Հոգեւորականութեան» գործով, որի միայն 16 էջանոց առաջին մասն է տպագրվել (1921 թ.) հեղինակի կենդանության օրոք: Ծրագրված մյուս մեծածավալ մասերը լույս չեն տեսել քաղաքական կյանքի վատթարացման և հեղինակի՝ արտասահման մեկնելու պատճառով: Գիրքը ամբողջությամբ ընթերցողին է հասել իր գրությունից քառասունհինգ տարի անց՝ 1966 թ.: Առաջին անգամ տպագրվել է Անթիլիասում, ապա վերահրատարակվել է Նյու Յորքում 1985 թ. (այն տպագրվել է նաև որպես Բոստոնի «Պայքար» թերթի հավելված): Բնութագրելով այս գիրքը՝ Շահան Շահնուրը, ով Թեոդիկի քրոջ որդին էր, գրել է. «**Գողգոթան** գիրք մըն է, ուր կ'ըսուի, թէ տեղի ունեցաւ ոճիր մը: Ճիշդ է: Սպաննեցին մեր Տէր Հայրը: Հազարամեայ ծերունի՛ն յօշոտեցին վայրագաբար, կուտակուած ոխով եւ **բոլորովին անփույթ՝ հանդէպ հաւանական**

¹ «Երգիծական տարեցոյց», 1921, էջ 4:

² Թուրք ջարդարարների ու մարդասպանների մի մասի ցուցակը կարելի է տեսնել 1985-ին Նյու Յորքում տպագրված «Գողգոթա Հայ Հոգեւորականութեան» գրքի «Ջարդարարներ» բաժնում (էջ 560-570), ուր նրանց թիվը հասնում է 378-ի:

վրիժառույթեան (ընդգծումը մերն է – *Ս. Ս.*): Անպաշտպան էր մեր երեցը, ինչպես որ անպաշտպան էր իր հօտը»¹:

Թեոդիկի այդ գիրքը կարևոր հանրագիտարան է ոչ միայն արևմտահայության բնակավայրերի անվանումների, մարդկանց թվաքանակների, բազում կրոնավորների կենսագրական տվյալներ պարունակելու առումով, այլև երկրի մեծ ու փոքր քաղաքներում, գյուղերում ու բնակավայրերում եղած վանքերի, միաբանությունների, մենաստանների, սրբավայրերի, կրոնական հաստատությունների ճշգրտման առումով. այն ունի ոչ միայն ազգագրական, այլև աշխարհագրական ու տեղագրական նշանակություն: Հարկավ, դա այդպես է: Բայց մենք, խոսելով այս գրքի մասին, ցանկանում ենք հաստատել այն գուգահեռը, որ կա դրա և Թեոդիկի «Յուշարձան ապրիլ տասներմեկի» միջև, և որը այնքան դիպուկ նկատել է Շահնուրը՝ **սպանեցին, քանի որ բոլորովին անհոգ էին հավանական պատասխանատվության ու վրիժառության հանդեպ**: Կատարվածի համար պատասխան տալու կոչը չէ՞, որ հնչեցնում է Թեոդիկը իր երկու գրքերով, և ուժեղ լինելու հանձնարարականը չէ՞, որ անում է նա իր հիշատակած ամեն մի մահով: Եվ որ ամենակարևորն է՝ որքան էլ Թեոդիկի գրքերը վերաբերում են մահացածներին, դրանք իրականում ուղղված են ապրողներին: Հենց դա է այս երկու գրքերի խորհուրդը, նրանց գոյության իմաստը, կոչումը: Մանավանդ որ թե «Յուշարձանում» և թե «Գողգոթայում» քիչ չեն նաև այն էջերը, որոնք սպացույց են դառնում հայ ժողովրդի ապրելու ու հարատևելու իրավունք-հիմքի. հիշենք հեղինակի կողմից հիշատակվող Վանի, Մուշի, Մասունի, Վասպուրականի, Գարահիսարի, Ուրֆայի և այլ վայրերի դուրսագնական դիմադրությունները, որոնք հաստատումն են այն բանի, թե **սպանդին համակերպվելը անընդունելի զգացում է իսկական հայ մարդու համար, և որ այլևս չպետք է թույլ տալ դրա կրկնությունը**:

Նահատակվածներից շատ-շատերը չունեցան իրենց գերեզմանները, մնացին անթաղ և կամ ավագուտների տակ: Թեոդիկի «Յուշարձան ապրիլ տասներմեկի» գիրքը եղավ նահատակների մի մասի պանթեոնն ու առաջին կանգնեցված հուշարձանը՝ որպես անմահ հիշատակի լուսավոր խաչ նաև հայոց եղեռնին զոհ գնացած մյուս բոլոր մարդկանց համար:

Հ.Գ. Հոդվածում արտահայտված այն միտքը, որ Թեոդիկի գիրքը ոգեկոչում է նահատակների անվան ու գործի տևական հիշողություն, պետք է ընկալել նաև մերժամանակյա գործունեության իմաստով: Այսօր, երբ ամբողջ հայ ժողովուրդը որդեգրել է Հայոց ցեղասպանությունը աշխարհին ու Թուրքիային ճանաչել տալու արդար ուղին, խիստ կարևոր է աշխատել և այն ուղղությամբ, որ մեղքի իրենց բաժինը ընդունեն ոչ միայն կայսերական Գերմանիայի իրավահաջորդ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը,

¹ Շահնուր Շ., Զոյգ մը կարմիր տետրակներ, Պէրոյթ, 1967, էջ 10:

այլն Թուրքիայի տարածքում բնակվող քրդերը, չեչենները, դրբաշներն ու այլ ցեղախմբեր:

Արսրուն Աვაգյան–Первый дневник воспоминаний армянского распятыя

В статье затрагивается документальное и историческое содержание книги «Memorial to April 11» западноармянского литературного деятеля Теодика, вышедшей в свет в 1919 г., переизданной в Стамбуле в 2010 г. Автор, в частности, склоняется к мысли, что эта книга – первый памятный дневник в армянской действительности, который увековечивает память об армянских писателях, национальных деятелях, духовенстве и представителей других общественных слоев, ставших жертвой Геноцида армян. Если с одной стороны он утверждает невинность жертв, то с другой стороны он подтверждает ту истину, что все они были носителями свободолюбивых идеалов своего народа и были преданы национальным интересам. Автор склоняется к заключению, что Турция запланировала и осуществила Геноцид армян, поскольку не заботилась о вероятной ответственности и мести. Поэтому книга Теодика посвящена не только памяти погибших, но и размышлениям и деятельности живущих, констатируя, что забвение резни и смирение с ней неприемлемы, и мы не должны допустить ее повтора.

Artsrun Avagyan – The First Memorial of the Crucifixion of the Armenians

The article refers to the authentic and historical material included in the book “Memorial to April 11” by Western Armenian literary figure Teodik printed in 1919 and reprinted in 2010 in Istanbul. The author particularly expresses the opinion that this book is the first memorial in the Armenian reality perpetuating the memory of the Armenian writers, intellectuals, national activists, religious people and representatives of other social strata who became victims of the Armenian Genocide. If, on the one hand, it proves the innocence of the victims, on the other hand it confirms the truth that they were all the bearers of freedom-loving ideals of their nation, they were people of high moral values, and true patriots devoted to the interests of the nation. The author comes to the conclusion that Turkey had planned and carried out the Armenian Genocide being indifferent towards possible responsibility and vengeance. Therefore, Teodik’s book is not only in memory of the dead but it is also directed to the thoughts and activities of the living, saying that forgetting the slaughter and adapting themselves to it is unacceptable and that it should not be repeated anymore.